

1053

# ԾՐԱԳԻՐ

ՆԱԽՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՍՏԱԿՈՒԹՅԱՆ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ

ՅԵՎ

ՀԻՆ ԱՐԵՎԵԼՔԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ

ՊԱՏՄԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ

---

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԻՆՍԻՏՈՒՏԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ

1937

9(1)  
5-98

30 MAY 2011

15 JUL 2005

ՀԱՅՀ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԻՆՍԻՏՈՒՏ

№ 59 ԶԵՐԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ № 59

մշ

9(1)  
6-98

## ԾՐԱԳԻՐ

ՆԱԽՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ

ՅԵԿ

ՀԻՆ ԱՐԵՎԵԼՔԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ

ՊԱՏՄԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Խ. Ս. Զ. Մ. Ժ. Կ. Խ.

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԳՈՐԾԵՐԻ ՀԱՄԱՏԻՈՒԹԵՆԱ-  
ԿԱՆ ԿՈՄԻՏԵ

Հ Ա Ս Տ Ա Տ Ո Ւ Ե Մ

ԽՍՀՄ ԺԿԸ, կից բարձրագույն պարտավորությունների գործեալ հո-  
մամբութեալ քաղաքացիությունը**ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ****ԹԵՄԱ I. ՆԱԽՆԱԴԱՐՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ՅԵՎ  
ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ**

1. Նախնադարյան պատմությունը վորպես նախնադարյան-  
կոմունիստական հասարակության, նրա քայլքայման և դասա-  
կարգային հասարակության վերածվելու պատմություն:

2. Նախնադարյան պատմության աղբյուրները:
3. Նախնադարյան հնագիտության հուշարձանները և  
նրանց թվագրությունը:
4. Ազգագրական նյութ, նրա ոգտագործման յեղանակ-  
ները:

5. Ուսմունք մնացուկների (պերճիտք) մասին: Պատմա-  
կան-համեմտատական մեթոդ:

6. Ֆոլկլոր:
7. Լեզու: Ակադ. Ն. Յակ, Մառի ուսմունքը:
8. Մարդաբանությունը վորպես կից դիսցիլին:
9. Ժամանակաբրության պրոբլեմները և պերիոդիզացիան  
նախնադարյան պատմության մեջ:
10. Լ. Գ. Մորգանի պերիոդիզացիան և նրա նշանակու-  
թյունը. Վայրենությունը և բարբարոսությունը, վորպես նախ-  
նադարյան պատմության հիմնական պերիոդներ:

312.  
38

## ԲԱԺԻՆ I. ՎԱՅՐԵՆՈՒԹՅՈՒՆ—ՆԱԽՆԱԴԱՐՅԱՆ ՀՈՏԸ ՅԵՎ ՏՈՂՄԱԿԱՆ ԿԱՐԳԻ ԾԱԳՈՒՄԸ

### ԹԵՄԱ 2-ՐԴ. ՄԱՐԴԿԱՅԻՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԾԱԳՈՒՄԸ ՅԵՎ ՆԱԽՆԱԴԱՐՅԱՆ ՀՈՏԸ

1. Բնական միջավայրը և մարդու վերեան գալու ժամանակը: Պոլիգնեղի և մոնողենեղի թեորիան: Մարդկային ցեղի՝ միասնությունը:

2. Ենգելսի ուսմունքը մարդու ծագման մասին: Կապիկների հոտային կյանքը: Աշխատանքի դերը կապկի մարդացման պրոցեսում:

3. Հնագույն բրածո մարդը՝ Պիտեկանտրոպոս, սինատրոպոս, հայելելերզյան մարդը, նեանդերթալացին: Մարդու տարածությունը (ռասելու):

4. Շելյան, աշելյան և մուստերյան կուլտուրաները:

5. Արտագրողական գործունելիություն: Կրակին տիրապետելը,

6. Աշելյան-մուստերյան բնակակայանները ԽՍՀՄ-ում (Կիյլք-Քորա, Զեկուրչա):

7. Հասարակության սկզբնական ձևի հարցը. բուրժուական կոնցեպցիաներ՝ մոնողամիա, մասնավոր սեփականություն, տղամարդու տիրապետություն:

8. Նախնադարյան հոտի հասկացողությունը մարքսիստական գրականության մեջ:

9. Նախնադարյան աշխատանքի կոլեկտիվ բնույթը:

10. Պրոմեսկուխոետ և արենակցական ընտանիք:

11. Խոսքի և մտածողության ծագումը: Ժիշերի լեզուն և հոդաբաժն լեզվի ծագումը:

12. Հոտային մարդու անկրոնությունը: Նեանդերթալյան թագման հարցը:

### ԹԵՄԱ 3-ՐԴ. ՏՈՂՄԱԿԱՆ ԿԱՐԳԻ ԾԱԳՈՒՄԸ

1. Անտրոպոգնեղի պրոցեսի ավարտումը:

2. Թասամերի ծագումը: Կրոմանոնյան մարդը: Գրիմալդի:

3. Խանայական պրոբլեմի ֆաշիստական աղավաղուժները:  
4. Վերին պալեոլիթի կուլտուրան: Որինյակ, Սոլյուտրե, Մաղին: Կարսիական կուլտուրա: Վերին պալեոլիթի բնակայաններն ու բնակարանները:

5. Վերին պալեոլիթի հուշարձանները ԽՍՀՄ-ի տերիտորիայում: Գագարինո, Կոստենկի, Մալթա, Մելիք:

6. Տոհմի առաջացման պրոբլեմը: Ամուսնական դասեր և խմբային ամուսնություն: Եկզոպամբա:

7. Ավտորալիագիր, վորպես վաղատոհմական հասարակության որինյակ:

8. Մայրիշխանության ծագումը:

9. Վայրենության շրջանի ընդհանուր բնութագիրը: Տեխնիկայի, արտադրողական գործունելիության, հասարակական ձևերի և զարգացմարտիստության զարգացումը վայրենության շրջանում:

## ԲԱԺԻՆ II. ԲԱՐԲԱՐՈՍՈՒԹՅՈՒՆ—ՏՈՂՄԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

### ԹԵՄԱ 4-ՐԴ. ՆՅՈՒԹԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ՅԵՎ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՅԱՒՄԸ

1. Բարբարոսության շրջանի զարգացման հիմնական գծերը: Մայրիշխանություն և հայրիշխանություն:

2. Մարդու արտադրողական գործունելիության զարգացումն ու շերտավորումը:

3. Աղբյան-Տարգենուազյան կուլտուրա: Միկրոլիթներ: Աղեղ և նետեր:

4. Վաղ նեղիթ: Մանկամողեցի կուլտուրա: Խոհանոցային կույտերի կուլտուրա: Մակրոլիթներ: Կավաղործություն: Նավակ:

5. ԽՍՀՄ-ի անտառային շերտի վաղ-նեղոլիթական բնակավայրերը: Լյալովյան բնակակայանը: Լագոգայի բնակակայանները:

6. Կամպինիական կուլտուրա:

7. Հողագործության ծագումը: Բրիչային յերկրագործու-

**թյուն:** Անտառահատման ու այրման (պօճառական) յերկը բարձրացության սիմոնմ: Արմատապատուղների կուլտուրա: Մայրիս: Բրինձ: Աշխատանքի բաժանումը բրիչային յերկործության մեջ:

8. Բրիչային հողագործակերի ժամանակակից հասարակությունները: Մելանեզիացիները: Երևանյան Աֆրիկայի նեգրերը: Բրիչային յերկրագործության գարգացումը իրոկեղների մոտ: Վոռովունային հողագործությունը Բորնեո և Ֆիլիպինյան կղզիների ցեղերի մոտ:

9. Հասուն նեոլիթ: Քարի հղումը և շաղափումը:

10. Անտառապահության ծագումը: Ցցավոր շենքերի կուլտուրան:

11. Գութանային յերկրագործության ծագումը: Յերկրագործության կապը անտառապահության հետ: Գութան և տափան (boron): Աշխատանքի բաժանումը գութանային յերկրագործության մեջ: Հացանունդ:

12. Գութանային հողագործության և անտառապահության գարգացման տարբերությունները արևելյան և արևմտյան կիսագնդերում:

13. Նախնադարյան-կոմունիստական սեփականություն: Բարիքների նախնադարյան-կոմունիստական բաշխումը:

## ԹԵՍԱ 5-ՐԴ. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՈՒՅՆՆԵՐԻ ԶԱՐԴԱՑՈՒՄԸ

Դուռակ կազմակերպումը, վորպես տոհմական կարգի արխայիկ ձեր: Ֆրատրիա: Դուռակ կազմուկերպության մասցուկները:

2. Ազգակցության կլասիֆիկացիոն սիստեմը: Մալայական և թուրանահանովանյան սիստեմները:

3. Խմբային ամուսնության գարգացումը: Պունալուա: Խըմբական ամուսնության մասցուկները: Պոլիանդրիա: Սորորատ: Լեբրատ: Կուգենային ամուսնություն:

4. Զուգամուսնություն: Ամուսնական բնակավայրի դիսլոկալ և մատրիլոկալ ձևեր:

5. Մայրական կոմունա և մայրական տոհմ:

6. Մայրիշխանության գարգացման աստիճանները: Երտաղը բաղական գործունեյության զանազան ձյուղերի հետ մայրիշխանության ուսնեցած կապի հարցը: Մայրիշխանությունը վոր-

առդական և ձկնորսական ցեղերի մոտ: Մայրիշխանությունը իրոկեղների և մինանգկաբառուների մոտ:

7. Կնոջ զրությունը և իշխանության հարցը մայրիշխանության ժամանակ «գինեկոկրատիա»: Մայրիշխանությունն աշանտիների մոտ:

8. Մայրիշխանության մնացուկների հույների, հոռմայեցիների, հին գերմանացիների և հին սլավոնների մոտ:

9. Մայրիշխանության մնացուկները ԽՍՀՄ-ի ժողովուրդների անցյալում:

10. Հայրիշխանության ծագումը: Պատրիլոկալ ամուսնություն: Ավունկուլատ: Ծագումը մայրական գծից հայրական գծով հաշվելուն անցնելը:

11. Տնային համայնքի առաջանալը: Հարավային սլավոնների զաղրուգան: Պատրոնիմիաներ:

12. Դաստիարակությունը տոհմական հասարակության մեջ: Տղաների և աղջիկների ինիցիացիան:

## ԹԵՍԱ 6-ՐԴ. ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԴԱՑՈՒՄԸ

1. Նախնադարյան մարդու մտածողությունը:

2. Նախնադարյան եմպիրիան: Պատճառական կապակցության գաղափարը: Կոմպլեքսային պատկերացումներ:

3. Լեի-Բյուլի թեորիան նախնադարյան մարդու «մինչարամարանական» և «միստիքական» մտածողության մասին:

4. Հաշիվ և թիվ:

5. Գրի նախահիմքերը: Պիկտոգրաֆիա:

6. Զարդարանքներ: Տատուիրովկա:

7. Կերպարանական արվեստ: Նկար, որնամենտ, քանդակագործություն: Կերպարանական արվեստի հնագիտական հուշարձանները: Բարայրների արվեստը:

8. Յերաժշտություն, պար, դրամայի սաղմնավորումը:

9. Կրոնի ծագման հարցը: Մարքսը, Ենգելսը, Լենինը նախնադարյան կրոնի մասին:

10. Մոգություն (մագիա), տոտեմիզմ, տարու, անիմիզմ:

11. Բնության և նրա առանձին յերկույթների պաշտա-

մունքը՝ արեի, լուսնի, ջրի, հողի, կրակի, ծառերի, քարերի  
պաշտամունքը և այլն:

12. Կրտնի արտացոլումը նախնադարյան արվեստի մեջ:
13. Նախնադարյան կոսմոգենիան և դիցաբանությունը:

### ԲԱԺԻՆ III. ԲԱՐԲԱՐՈՍԻԹՅՈՒՆԻՑ ԴԵՊԻ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Տնիմական հասարակության համայումը,  
դաշնակարգերի յեզ պետության ժագումը

#### ԹԵՍԱ 7-ՐԴ. ՏԵԽՆԻԿԱՅԻ ՅԵՎ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

1. Արտադրողական ուժերի զարգացումը:
2. Մետաղնիրի հայտնագործումը: Պղինձ, բրոնզ: Բրոնզե  
դարն Արևմտյան Յեվրոպայում և ԽՍՀՄ-ում:
3. Մետաղդության հետագա զարգացումը: Յերկաթ:
4. Կավագործության զարգացումը: Բրուտի ճախրիկը:
5. Անասնապահության առանձնացումը: Աշխատանքի ա-  
ռաջին հասարակական մեծ բաժանումը:
6. Արհեստի ծագումը:
7. Ստրկության ծագումը: Ստրկության վաղ ձևերը:
8. Առելրական փոխանակության ծագումն ու զարգացումը:  
Շուկաներ: Համր փոխանակում: Միջնորդ վաճառականներ:
9. Արժեքի չափի ծագումը: Վճարման միջոցներ: Փողի  
ծագումը:
10. Նախնադարյան կոմունիստական սեփականության և  
բարիքների նախնադարյան կոմունիստական բաշխման քայ-  
լացումը:

#### ԹԵՍԱ 8-ՐԴ. ՀԱՅՐԻՇԽԱՆԱԿԱՆ ՏՈՂՄԻ ՔԱՅՔԱՅՈՒՄԸ. ՄԻՋՏՈՂՄԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Մասնավոր սեփականության ծագումը և գույքի ժառան-  
գումը վորդիների կողմից:
2. Հայրիշխանական ընտանիք: Բազմակնություն: Միակը

նության առաջացումը: Առևանդում, գնովի ամուսնություն,  
ոժիա, ղալիմ (կլսագին): Կնոջ ճորտացումը:

3. Միջտոնմային ընդհարումներ: Արյան վրեժ և փրկանք-  
ների սիստեմ:

4. Պատերազմի ծագումը: Ռազմական տակտիկա: Ամրաց-  
րած զցողեր: Քաղաքատեղեր: Կովկասյան մարտական աշտարակ-  
ներ: Դուգազ (զրուժինա):

5. Տոհմերի միություններ: Ցեղ: Ցեղերի միություններ:

6. Տղամարդկային միությունների և գաղանի ընկերու-  
թյունների գերը: Նրանց պայքարը նախնադարյան կոմունիս-  
տական սեփականության գեմ:

7. Տոհմական կապերի թուլացումը: Տոհմական հողատի-  
րության և հողոգտագործման քայլացումը:

8. Գույքային անհավասարությունը տոհմի մեջ: Տոհմա-  
կան գեմոկրատիզմի քայլացումը: Անվանի ընտանիքների  
անջատումը առհմում (տոհմական արխատոկրատիզմ): Այսպես  
կոչված «տոհմական փոխոգնություն» և աղքատ տոհմակիցների  
«լինամատարություն»:

9. Հայրիշխանական տոհմի քայլացումը յերկրագործ և  
անասնապահ ժողովուրդների մեջ: Հայրիշխանական տոհմը հին  
յակուտների, բուրյատների, կովկասյան ժողովուրդների մոտ:

10. Նահապետական տոհմը հույների և հումայեցիների,  
ին գերմանացիների և սլավոնների մոտ:

11. Հայրիշխանական տոհմական կարգի զարդարական-  
սությունը: Նախնիքների պաշտամունք: Տոհմական տոնակատա-  
րություններ և սրբարաններ: Եամանություն:

#### ԹԵՍԱ 9-ՐԴ. ԴԱՍԱԿԱՐԳԵՐԻ ՅԵՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԾԱԳՈՒՄԸ

1. Մասնավոր սեփականության ամրացումն ու աճումը:
2. Ստրկության զարգացումը: Հասարակության առաջին  
խոշոր բաժանումը զասակարդերի:
3. Մասնավոր հարստությունների կուտակումը և գույքա-  
յին անհավասարություն:
4. Պատերազմի զարգացումը:
5. Փառանգական իշխանության զարգացումը:

6. Դատելու և պատժի իրավունք:

7. Արենակցական կապերի անկումը և նրանց փոխարինումը տերիտորյալ կապերով:

8. Դրացիական համայնքի ծագումը:

9. Մարքսը, Ենդելը և Լենինը գյուղական համայնքի մասին:

10. Գյուղական համայնքը Հնդկաստանում և Ռուսաստանում: Գերմանական մարկա:

11. Դասակարգերի և պետության ծագումը:

## ԹԵՍԱ 10-ՐԴ. ՄԵՐ ՀԱՅՐԵՆԻՔՆ ԱՆՑԱԼՈՒՄ

1. ԽՍՀՄ-ի տերրիտորիան և բնական պայմանները սառուցային շրջանում:

2. Մարդու ամենահին հետքերը ԽՍՀՄ-ի տերրիտորիայում հնագիտական և մարդաբանական նյութերով):

3. Վերին պալեոլիթի մարդիկ ԽՍՀՄ-ի յեվրոպական և ասիական մասերում (Մեզինում, Գագարինոյում Կոստենկայում, Յելիսեևիչում, Մալտայում և այլ վայրերում գտնված նյութերով):

4. Նախապատմական բարբարոս ցեղերը ԽՍՀՄ-ի տերրիտորիայում՝ ըստ նեոլիթի (Լյալովո, Վոլոսովո, Տրիպոլյան կուլտուրա), բրոնզի (Ֆատյանովո, Հորա—կատակոմբային կուլտուրա, Յամա) և յերկաթի (Անանինո, Դյակովո քաղաքատիղ) զարարշաններին վերաբերող հուշարձանների:

5. ԽՍՀՄ-ի Յեվրոպական մասի ժողովուրդների (ոուսների, Ռուկայինցիների բելոռուսների, թաթարների, մարիների և այլն) նախապատմական նախնիքների կուլտուրան և հասարակական կարգը,

6. Տոհմական կարգը ԽՍՀՄ-ի ասիական մասի վորսորդների, ձկնորսների և անասնապահների մեջ:

7. Տոհմական կարգի մասցուկները ԽՍՀՄ-ի ժողովուրդների կենցաղում մինչև Հոկտեմբերյան Պրոլետարական Մհծ հեղափոխությունը:

## ՅԵԶՐԱՓԱԿՈՒՄՆ

### ԹԵՍԱ 11-ՐԴ. ՆԱԽՆԱԴԱՐՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱԳՈՒՅՆԸ

1. Նախնագարյան վիճակի պատկերացումը հին աշխարհում: «Դրախտ» և «Վոսկեդար»: Նախնագարյան վիճակի նատուրալիստական կոնցեպցիան: Լուկրեցիուս: Նահապետական թիորիա: Արիստոտել:

2. Նահապետական թեորիան միջին դարերում:

3. Ազգագրական նյութի կուտակումը մեծ հայտնագործումների դարաշրջանում:

4. Լաֆիտուս:

5. «Բնական վիճակի» գաղափարը Ռուսոյի մոտ:

6. Նախնագարյան վիճակին վերաբերող գիտության հաջողությունները 19-րդ դ. կեսին:

7. Բուշե գեղագործը և բրածո մարդու գյուտը: Գաբրիել գեղարտիկը:

8. Բախովինը և նրա «Մայրական իրավունքը»: Մակ-Լեննան:

9. Մորգանի ուսմունքը:

10. Նախնագարյան պատմությունը Մարքսի-Ենդելսի սկզբնական աշխատություններում: Ենդելսի «Բնականիք», մասնավոր սեփականության և պետության ծագում» աշխատությունը մեծ ետապ ե նախնագարյան վիճակին վերաբերող գիտության պատմության մեջ:

### ԹԵՍԱ 12-ՐԴ. ՆԱԽՆԱԴԱՐՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՏԵՂՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՐՔՍ-ԼԵՆԻՆՅԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՍԻՍՏԵՄՈՒՄ

1. Մարքսի և Ենդելսի ուսմունքը արխայիկ, կամ սկզբնական, սոցիալ-տնտեսական ֆորմացիայի մասին:

2. Բուրժուական գիտությունը նախնագարյան վիճակի մասին և նախնագարյան հասարակության խորհրդային պատմությունը:

3. Նախագարյան պատմություն և քաղաքացիական պատմություն:

4. Նախագարյան պատմության կապը Արեւելքի, անտիկ հասարակության, միջին դարերի և ԽՍՀՄ-ի ժողովուրդների պատմության հետ:

5. Նախագարյան պատմությունը և իրենց զարգացման մեջ գասակարգային կարգի չափած և արխայիկ կենսաձևը պահպանող ցեղերի և ժողովուրդների պատմությունը:

6. Հետամնաց ցեղերի և ժողովուրդների վիճակը դասակարգային հասարակության մեջ:

7. Խասայական թեորիայի հակագիտականությունն ու մարդատայց ելությունը:

8. Զարգացման արտակապիտալիստականությունն ու հետամընացության պլրութիմի լուծումը՝ ԽՍՀՄ-ում:

## ԶԵՌՆԱՐԿՆԵՐ

### 1. ՊԱՐՏԱԳԻՐ

1. ԵՆԳԵԼՅ Ֆ.—Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը, Յերևան 1936 թ.

2. ԵՆԳԵԼՅ Ֆ.—Աշխատանքի գերը կապկի մարդացման պըրոցեսում («Բնություն գիտելեկաթեկա» գրքի մեջ):

3. ԵՆԳԵԼՅ Ֆ.—Խմբային ամուսնության նոր հայտնագործված մի գեղք, (Հավելված «Ընտանիքի ծագման» 1937 թ. հրատարակության մեջ):

4. ԼԵՆԻՆ Վ. Ի.—Դասախոսություն պետության մասին: (Յերկերի ժող. հ. XXIV կամ առանձին հրատարակություն):

5. ՄԱՐՔՍ Կ.—Վ. Զառուիչին ուղղված նամակի սեազրությունները (соч. т. XXVII)

### 2. ԼՐԱՑՈՒՑԻՉ

1. Морган Л. Г.—Древние общества, изд. 1934 г. или 1935 г. ч. I гл. 1—3.

2. ՅԵՓԻՃԵՆԿՈ Պ. Պ.—Дородовое общество. М.-Л. 1934 г. (տեղեկանքների համար):

3. ՄՈՐԳԱՆ Լ. Պ.—Дома и домашняя жизнь американских туземцев. Л. 1934 г.

4. Л. Г. Морган.—Жизнь и учение, издание 2-ое, переработанное и дополненное. Ленинград, 1935 г.

5. ԿՈՎՈՒԿՈՎԻ Մ.—Очерк происхождения семьи и собственности. П. 1895 г.

6. ՏԱԽԹԱՐՅՈՎ Կ.—Очерки по истории первобытной культуры. М. П. 1922 г.

7. ԲԱԳԵՐ Ո. ՎՈՐԵՎՈՎՈՎԻ Մ.—Из истории родового общества на территории СССР, ГАИМК М. Л. 1934 г.

8. ՇԹԵՅՆԵՆ Կ.—Среди диких народов Бразилии 1930, 1931 կամ 1935 թ. յերեք հրատարակություններից մեկը):

9. ԶԻՐԵՐ Ն.—Очерки первобытной экономической культуры (1883, 1899 կամ 1923 թ. յերեք հրատարակություններից մեկը):

10. ՖՐԵԳԵՐ Զ.—Золотая ветвь, т. 1 изд. 2-ое М. 1929 г.

11. ԵԿԱԿՐՈՒՄ Մ.—Человек и его предки. М. 1936 г.

12. ՇԹԵՐՆԲԵՐԴ Լ.—Первобытная религия 1936 г.

13. » » » —Семья и ред у народов Северо-Восточной Азии, Л. 1933 г.

14. ՄԻԼԼՈՒՄ ՄԱԼԱՅ Ն.—Путешествия. М.-Л., 1936 г. М. 1923 г.

## II. ԱՐԱՋԱՎՈՐ ԱՍԻԱՅԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐՆ ՈՒ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

### ԾՐԱԳԻՐ

#### ՀԻՆ ԱՐԵՎԵԼՔԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ (Պատմական ժակուլտետի համար)

#### I. ՀԻՆ ԱՐԵՎԵԼՔԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ

#### ՆԵՐԱՌՈՒԹՅՈՒՆ

1. Հին Արևելքի պատմության տեղն ու նշանակությունը ընդհանուր պատմության ուսումնասիրության և դասավանդման համար:

2. Հին Արևելքի պատմության ակտուալությունը և նրա ուսումնասիրության խնդիրները Մարքսի Ենգելսի-Լենինի և Ստալինի տեսակետից: Բուրժուական և ֆաշիստական կոնցեպցիաների քննազատությունը: Գիտական նոր նյութի ոգտագործումը և հին Արևելքի սոցիալ-տնտեսական հարաբերությունների բնութագրումը:

3. «Հին Արևելք» և «կլասիկ Արևելք» տերմինների նշանակությունը:

4. Հին Արևելքի յերկրների համեմատական-աշխարհագրական տեսությունը, գետերի նշանակությունը, վոռոգման սիստեմ, անապատներ և ոտղիսներ, տափաստաններ, լեռնային վայրեր: Կլիմայական պայմաններ: Ֆլորա և ֆաունա: Հանածո հարստություններ: Արտադրական գործունեյության հնդհանուր պայմաններ:

5. Առևտուրի բնական ձանապարհները և հին Արևելքի յերկրների մեջ յեղած կուլտուրական կապերը:

1. Անտիկ հեղինակների վկայությունները հին Արևելքի պատմության վերաբերյալ:

2. Հնագիտական պեղումների պատմությունը:

3. Հին գրավոր հիշատակարանները: Սեպագիրն ու նրա վերծանումը (Դրուեքոնդից մինչև Գրողնի): Ասորագիտության հեթիթագիտության և իրանիստիկայի զարգացումը 16—20-րդ. դարերում:

4. Կարեռագույն վավերագրեր՝ որենքներ, տնտեսական հաշվետվության փաստաթղթեր: տարեգրություններ, նամակներ, հաղթական և շինարարական արձանագրություններ, գրական յերկեր, կրոնական և մոգական տեքստեր:

5. Նյութական կուլտուրայի հուշարձաններ:

6. Առաջավոր Ասիայի պատմագրության զարգացումը նոր ժամանակներում: Խորհրդային գիտնականների աշխատությունները:

7. Ժամանակագրություն:

## III. ՍՈՒՄԵՐԻ ՅԵՎ ԱԿԱՐԴԻ ՀՆԱԳՈՒՅՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Հարավային Միջագետքի բնական պայմանները:

2. Սենաարի բնակչությունը՝ սումերներ, ակկագացիներ: Հնագույն կուլտուրաներ:

3. Համայնական կարգի քայլայումը և մանը պիտությունների (պատեսխանների) առաջանալը:

4. Հնագույն տնտեսական, հասարակական և պետական կարգը ըստ տնտեսական հաշվետվության փաստաթղթերի և պատմական արձանագրությունների: Վոռոգման սիստեմ: Առևտուրի աճումը և վաշխառության յերեան գալը: Տոհմական կարգի քայլայումը և ստրկության յերեան գալը: Բանվորն ու ազատ աշխատանքը գյուղատնեսության և արհեստի մեջ:

5. Սումերի և Ակկարդի տնտեսական և քաղաքական կարեգորագույն կենտրոնները՝ Ուր, Լագաշ, Ուրուկ, Ումմա, Լարսա, Նիպպուր, Բիշ, Աղադե Եղնումնա:

6. Սոցիալական հակասությունների աճումը: Ուրուկագինի ռեֆորմները և նրանց նշանակությունը (մոտ 2800 թ. մ. թ. ա.);

7. Սումեր-ակկադական թագավորության կազմվելը: Հուագագիսի թագավորի գործունեյությունը: Ակկադի բարձրանալը: Սարգոն Հին (28-րդ դար մինչև մ. թ. ա.): Նրա հաջորդները՝ Մանիշտուսու և Նարամեյին:

8. Ակկադական թագավորության քայլայումը: Գուտիացիների ներխուժումը:

9. Սումերի յերկրորդ բարձրանալը: Գուղոն Լագաշ քաղաքի կառավարիչը: Ուրայի գերակառությունը:

10. Միջագետքի նվաճումը ելամիտների կողմից (23-րդ դար մինչև մ. թ.): Խինի և Լարսի դինաստիան:

#### IV. ՀԻՆ ԲԱՐԵԼՈՆ

1. Առևտրի, առևտրական քաղաքների գարգացումը և քաղաքային միջակ ազգաբնակչության աճումը: Բարելոնի, վորպիս առևտրական կենտրոնի նշանակությունը:

2. Ամորիաները և ամորիայան գինաստիան Բարելոնում:

3. Բարելոնական թագավորության կազմվելը և նրա ընդարձակումը Համուրապու ժամանակ (մոտ 2000 թ. մ. թ. ա.):

4. Համուրապի թագավորը, նրա գործունեյությունը և նրա որենքների ժողովածուն:

5. Հին Բարելոնի տնտեսական և հասարակական կարգը՝  
ա) յերկրագործություն, անասնապահություն, արհեստ և առևտուր. բ) հողատիրություն և վարձակալության ձևը: Ազատ ըրնակչության զանազան կատեգորիաների դրությունը. գ) նահապետական ընտանիք և նրա նշանակությունը: Ընտանեկան իրավունք. դ) սարկություն և ստրուկտուրի շահագործման ձևեր. յե) տաճարական առևտուրը և վաշխառություն. դ) թագավորական տնտեսություն և կենտրոնացած բռնապետություն (դեսպոտիա):

6. Բարելոնյան թագավորության անկումը: Քասսիտների նվաճումը:

#### V. ԲԱՐԵԼՈՆՅԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱ ՅԵՎ ՆՐԱ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

1. Դիր, նրա ծագումն ու զարգացումը: Սեպագրերի հիմնական սկզբունքները և տարածումը:

2. Բարելոնական գրականություն. եպոս, կրոնական լիրիկա, դրամայի սադմերը: Պատմական գրուցներ: Դիլլամեց, նախանականա:

3. Բարելոնական գիտության ծագումն ու զարգացումը՝ աստղաբաշխություն և մաթեմատիկա: Հնագույն որացուցային սիստեմներ: Ցերկարաշափություն և հողաչափական գործը:

4. Բարելոնական կրոնը և նրա կազմն արվեստի, գրականության և գիտության հետ:

5. Պանբարելոնիզմի թեորիան և նրա քննադատությունը:

#### VI. ՀԻՆ ՅԵԳԻՂՏԾՈՍԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐՆ ՈՒ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

312  
38

1. Անտիկ հեղինակների վկայությունները հին Յեգիղտոսի պատմության վերաբերյալ:

2. Հին Յեգիղտական գրավոր հուշարձանները: Յեգիղտական արձանագրությունների վերձանումը: Ֆրանսուա Շամպուլ լյոն:

3. Յեգիղտագիտության գարգացումը 19—20-րդ. դ. բուրժուատական յերկրներում և ԽՍՀՄ-ում:

4. Յեգիղտասում կատարված հնագիտական պեղումների պատմությունը:

5. Կարևորագույն վավերագրեր, տարեգրեր, թագավորական հրովարտակներ, ինքնակենսագրություններ, գործարարական փաստաթղթեր, գրական յերկեր, կրոնական—մոգական ժողովածուներ:

6. Նյութական կուլտուրայի, գեղարվեստական արհեստի հուշարձաններ և արվեստի յերկեր:

7. Հին յեգիղտական պատմության ժամանակագրությունը և պերիոդիզմիցիան:

#### VII. ԱՐԽԱՅԻԿ ՅԵԳԻՂՏԾՈՍ. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱԶՄՎԵԼԸ

1. Յեգիղտոսի հնագույն պատմության վերակառուցումը պեղումների, նյութական կուլտուրայի հուշարձանների և արխայիկ դարաշրջանի արձանագրությունների հիման վրա:

2. Հին Յեղիպտոսի աշխարհագրական տեսությունը:  
3. Յեգիպտոսի հնագույն բնակչությունն ու հնագույն  
կուլտուրան:

4. Արհեստական վոռոգման վրա հիմնված յերկրագործու-  
թյան զարգացումը:

5. Գույքային և սոցիալական շերտավորումը քայլայվող  
տոհմական կարգի ընդերքում: Դասակարգային հասարակության  
առաջանալը: Ստրուկների և ազատ արտադրողների զրությունը:

6. Նոմերի ծագումը, նրանց միացումը և հյուսիսային ու  
հարավային Յեղիպտոսի պետություններ կազմվելը:

7. Հյուսիսային և Հարավային Յեղիպտոսի պատերազմները  
և միանական պետության կազմվելը: Առաջին փարավոնների  
գործունեյությունը:

### VIII. ՀԻՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՅԵԳԻՊՏՈՍԸ

1. Տոհմական կարգի հետագա քայլայումը: Նահապետա-  
կան ընտանիքի ամրապնդումը և տնային ստրկության ձևերը:

2. Հնագույն պատերազմները: Մինայի թերակղու նվա-  
ճումը, նուրբիա ներթափանցելը: Առևտուր Ասորիքի հետ:

3. Կենտրոնացած բռնապետության կազմվելը: Պետական  
բյուրոկրատական ապահարատի զարգացումը, 3-րդ և 4-րդ հա-  
րբածության փարավոնները: Մեծ բուրգերի շինարարությունը:  
Հին թագավորության քայլայումը (մոտ 2500 թ. մ. թ. ա.):

### IX. ՄԻԶԻՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՅԵԳԻՊՏՈՍԸ

1. Անցողիկ ժամանակը Հնից դեպի Միջին թագավորու-  
թյունը: Թեբեյի բարձրանալը:

2. Յեղիպտոսի նոր միացման նախադրյալները:  
3. Վոռոգման ցանցի ընդարձակումը և ֆայումի մելիորի-  
ցիան:

4. Արհեստի զարգացումը Ներքին և արտաքին առևտուրի  
զարգացումը: Յեղիպտացիների ներթափանցումը Հարավային  
Սիրիա (Ասորիք): Նուրիայի նվաճումը, առևտրական եքսպեդի-  
ցիաներ և ռազմական արշավանքներ:

5. 11-րդ և 12-րդ հարստության փարավոնների քաղաքա-  
կան գործունեյությունը (մոտ 2000 թ. մ. թ. ա.):

6. Յերկրագործական ազնվականության նշանակության  
աճումը և սոցիալական հակասությունների սրումը: Սոցիալական  
հեղաշրջման նկարագրությունը Լեյդենյան № 344 պապիրուսում:  
(«Հպուվերի խոսքը»): Միջին թագավորության քայլայումը:  
Յեղիպտոսի նվաճումը Հյուքսոսների կողմից:

### X. ՆՈՐ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՅԵԳԻՊՏՈՍԸ

1. Ազգային շարժումը հարավային Յեղիպտոսում: Թեբեյի կա-  
ռավարիչների պայքարը հյուքսոսների հետ: Հյուքսոսների ար-  
տաքսումը Յախմոսի կողմից և Յեղիպտոսի միացումը (մոտ  
1580 թ.):

2. 18-րդ հարստության փարավոնների առևտրական և նը-  
վաճողական քաղաքականությունը: Առևտրական մեծ եքսպեդի-  
ցիաներ: Թությունների և Ամենխոսեպների արշավանքները դե-  
պի Սիրիա և Նուրիա: Նվաճած մարզերի կառավարումը:

3. Առևտրական քաղաքների աճումն. ու բնակչության մի-  
ջին շերտերի ուժեղացումը: Սորկատիրության զարգացումը ա-  
ռևտրի և պատերազմների կապակցությամբ:

4. Արիստոկրատիայի հարստանալը: Տաճարների տիրապե-  
տությունների աճումն ու քրմության բարձրացումը:

5. Սոցիալ-տնտեսական ճգնաժամը Յեղիպտոսում: Նվաճո-  
ղական պատերազմների զադարումը: Յեղիպտական ազգեցության  
թուլցումը Ասիրիայում Ամենխոսեպ 3-րդի ժամանակ և առիական  
տիրապետությունների մի մասի կորուսար Յեղիպտոսի կողմից:  
Դիվանագիտական գրադրություն (Թելել-Ամորնի արխիվը):

6. Եփնատոնը և նրա կրօնական ուժորմը (1375—1358 թ.թ.):  
Այդ ռեֆորմի դասակարգային հիմքը: Եխնատոնի պայքարը Թե-  
բեյի քաղաքի Ամոնի քրմության դեմ: Նոր մայրաքաղաք Ախտա-  
տոնի կառուցումը:

7. Ռեալիզիան և Եխնատոնի ուժորմի լիկվիդացիան Թու-  
թանիստոնի և Խորհմիսերի ժամանակ:

8. Յեղիպտոսի կոնսոլիդացիան Խորեմիսերի և Սեթ 1-ինի

որով: Փարավոնների և ավագանիների, հողային տիրապետությունները: Տաճարական հողատիրության աճումը:

9. Ռամզես 2-րդի պատերազմները հեթիքների հետ: Վարձկան զորքերի գործադրությունը՝ կաղեցի ճակատամարտը: Հեթիքական պատերազմի վերջը և նրա արդյունքները:

10. Ռամզես 2-րդի (1292—1225 թ. թ.) քաղաքական դերը: Փարավոնի պաշտամունքի գարգացումը:

11. Մերնեպտի և Ռամզես 3-րդի պատերազմները լիբիացիների և ծովային ժողովուրդների հետ (Շարդանա, Ակայուշ և ուրիշները):

12. Սոցիալական պայքարի սրումը: 19-րդ հարստության վերջի խառնակությունները: Արհեստավորների հուզմունքները ֆինանսական նեկրոպոլիսում: Յեղիպտոսի թուլացումը Ռամզեսիների ժամանակ:

13. Քրմության տնտեսական և քաղաքական ուժեղացումը և իշխանության զավթումը թերեյի քահանայափետների կողմից: Բարձր քրմության վերածումը ժառանգական կաստայի:

14. Վարձկանության զարգացումը: Լիբիացիների և յեթովպացիների տիրապետության հաստատումը Յեղիպտոսի վրա:

## XI. ՀԻՆ ՅԵԳԻԹՏՈՍԻ ԿՈՒԼՏՈՒՐԱՆ

1. Յեղիպտական կուլտուրայի գասակարգային բնույթը:

2. Գրերի գյուտն ու զարգացումը: Հիերոգլիֆային, հիերատիկ և գեղոտիկ գրության սկզբունքները:

3. Գրականություն՝ հեքիաթներ, պատմվածքներ, քարոզներ, յերգեր, որհներգ, լիրիկա, դրամայի սաղմերը:

4. Արվեստն ու նրա զանազան տեսակները՝ ճարտարապետություն, նկարչություն, քանդակագործություն, գեղարվեստական արդյունաբերություն, յերաժշություն, պար:

5. Կրոնի զարգացումը և նրա կապը արվեստի, դրականության և գիտության հետ:

6. Յեղիպտական գիտության՝ մաթեմատիկայի, մեխանիկայի, աստղաբաշխության և բժշկագիտության՝ ծագումն ու զարգացումը: Որացուցային սիստեմ:

7. Տեխնիկայի զարգացումը՝ շինարարական գործ, մետալուրգիա տեքստիլ արտադրություն և այլն: Հնագույն գիտության գործնական նշանակությունը:

## XII. ՀԵԹԻԹՆԵՐ ՅԵՎ ՀԵԹԻԹԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱ

1. Փոքր Ասիայի աշխարհագրական պայմանները և նրա բնակչությունը:

3. Հեթիթաբանության պատմությունը: Հնագիտական պեղումները Փոքր Ասիայում և հյուսիսային Ասորիքում: Հեթիթական գրերի վերձանումը:

3. Հեթիթական պատմության աղբյուրները: Հեթիթական որենքները:

4. Միացյալ հեթիթական պետության կազմվելը: Հեթիթական ժողովուրդների տնտեսական և հասարակական կարգը: Ռազմական հոգակությունները: Սարկությունը հեթիթների մոտ:

5. Հեթիթների հարաբերություններն ու պատերազմները հարեւն ժողովուրդների հետ՝ Ուրարտուի ասորեստանցիների, միտանիների և հյուսիսային Ասորիքի ցեղերի հետ: Հեթիթների ներթափանցումը Ասորիք և Նրանց ընդհարումները յեղիպտացիների հետ:

6. Հեթիթական պետության անկումը 13—12-րդ դարերում: Հեթիթական հետագա թագավորությունները:

7. Հեթիթական կուլտուրան և նրա կապը մյուս ժողովուրդների՝ խարիցիների, եղեյացիների, ուրարտացիների, ասորեստանցիների և հյուսիսային Ասորիքի բնակչության կուլտուրայի հետ:

## XIII. ՓՅՈՒՆԻԿԻԱ ՅԵՎ ԱՍՈՐԻՔ

1. Ասորիքի և Փյունիկյայի աշխարհագրական պայմանները:

2. Աղբյուրներ՝ բիբլիական և անտիկ տրադիցիա, պեղումների արդյունքները (Բիբլ, Ռամզեսամրա և այլն), արձանագրություններ:

3. Ասորիքը 2-րդ հազարում յակի յերկրորդ կիսում և 1-ին հազարամյակի սկզբում մինչև մ թ.։ Դամասկոսի բարձրանալը 11—10 դ. գ.։

4. Փյունիկեցիների սկզբնական պատմությունը: Փյունիկյան քաղաք-պետությունները՝ Բիբլը, Սիրոն, Տյուրոս:

5. Փյունիկիայի անտեսական կարգը: Յերկրագործությունը: Արհեստ և առևտուր ու նրանց խոշոր նշանակությունը յերկրի տնտեսության մեջ:

6. Փյունիկիայի հպատակեցումը Յեզիպտոսին 2-րդ հազարամյակում: Փյունիկյան քաղաքների ինքնուրույնության վիրականումը 13-րդ դարում:

7. Փյունիկյան առետրի ծաղկումը 1-ին հազարամյակում մինչև մ. թ., փյունիկյան գաղութացումը: Կարթագեն:

8. Փյունիկյան քաղաքների հասարակական և քաղաքական կարգը: Դասակարգային բաժանումը և դասակարգային պայքարի ձեռքը փյունիկյան հասարակության մեջ: Մտրուկների շահագործումը: Քաղաքական կառուցվածք:

9. Փյունիկյան կուլտուրա, այրուբենական գիր և նրան ծագման պայմանները. Կրոն, առասպելական պոեմներ (Մաս-Շամրա), փյունիկյան արվեստի սինկրետիկ բնույթը:

## XIV. ՊԱՂԵՍԻՆ

1. Պաղեստինի աշխարհագրական պայմանները:

2. Աղբյուրներ. աստվածաշունչ և հնագիտական տվյալներ:

Տրաղիցիոն-աստվածաբանական հայացքը աստվածաշնչի վրա և Խորայելի ու Հուդայի յերկրի պատմության արագիցիոն-աստվածաբանական կոնցեպցիան: Բիթիթական քննազատությունը: Բուրժուական բիթիթագիտության արդի վիճակը և նրա քննապությունը:

Մարգարիտական գիտության ինդիրները բիթիթական քըն-նազատության և հին յերայական պատմության և կրոնի ու սումմասիրության բնագավառում:

3. Խորայելի սկզբնական պատմության պրոբլեմը: Խորայելի անասնապահ ցեղերի տոհմացեղային կարգը: Հրեա:

ների ներխուժումը պաղեստին: Անցումն յերկրագործության շամայնական կարգ և նրա քայլքայումը: Սարկության ծագումը:

4. Հրեաների պայքարը փղտացիների և մյուս հարեան ժողովուրդների դեմ: Միասնական պետություն կազմելը Սավուշդի ժամանակ: Դավիթ և Սողոմոն: Համայնականների շահագործումը տուրքերով, արտակարգ հարկերով և հարկադիր աշխատանքներով Սողոմոնի ժամանակ: Համայնականների ապատամբությունը Սողոմոնի մահվանից հետո: Թագավորության բաժանումը Խորայելի և Հուդայի թագավորությունների (10-րդ դ.):

5. Պաղեստինի նշանակությունը Առաջավոր Ասիայի առետըրի մեջ: Աշխարհիկ և քրմական արխտոկրատիայի ուժեղացումը: Վաշխառության և ծառայագրական (կաբալյօե) ստրկության աճումը: Համայնական հողերի հափշտակման փորձերը 8-րդ դարում: Դասակարգային պայքարը 8—7-րդ դ. գ.: Մարգարեյության պրոբլեմը դասակարգային պայքարի կապակցությամբ: Քրմության և պաշտոնական մարգարեյության դաշինքը:

Սոցիալական որենսգրության փորձերը և դրանց խորտակումը:

6. Խորայելի և Հուդայի քաղաքական կարգը 8—7-րդ դարերում:

7. Հրեայական թագավորությունների պայքարը Յեզիպտոսի, Ասորեստանի և Քաղեյայի դեմ և նրանց անկումը:

8. Խորայելական-հուդայական կուլտուրան. գիր, գրականություն, կրոն:

## XV. ԱՍՈՐԵՍՏԱՆ ՅԵՎ ԽԱԼԴԵՐ

1. Ասորեստանի և խալդերի պատմության աղբյուրները:

2. Ժամանակից միջագետքի աշխարհագրական պայմանները:

3. Բնակչություն՝ ասորեստանցիներ և Սուբարիներ:

4. Ասորեստանի հնագույն պատմությունը: Ասորեստանցիների առևտրական-գաղութացման գործունեյությունը Փոքր Ասիայում (Կաբաղովկիա):

5. Ասորեստանի բարձրացվեմը 14—13-րդ դարերում մինչեւ մ.թ.: Սոցիալ տնտեսական հարաբերություններն ու սորկությունն Ասորեստանում: Հին ասորեստանի քաղաքական կարգը: ավագանիների և թագավորի իշխանությունը: Որենսգրության բնույթը: Հողային հարաբերություններ: Կնոջ պրությունը:

6. Պատերազմ միտանիների և խատտերի գեմ: Ասորեստանի անկումը 2-րդ հազարամյակի վերջում:

7. Ասորեստանի վերելքը 9-րդ դարում: Յերկաթի տարածումը և ռազմական գործի զարդացվեմը: Աշուրնասիրպալի և Սարմանասար 2-րդի արշավանքները: Պատերազմներ խալզերի հետ:

8. Հայաստանի աշխարհագրական պայմանները: Բնակչությունը: Խալզական պետության սոցիալական բնութագիրը: Անգրկովկատի նվաճումը իսլամի կողմից: Արգիշտիի և Սարգուր 2-րդի հաջող արշավանքները Ասորեստանի գեմ:

9. Թիգրաստ-Պարսարը և ասորեստանյան բանակի վերակազմությունը: Ասորեստանյան մեծ պետության կազմվելը: Սարգուր, Սենեքերիմ, Ասասրհաղոն և Ասուրբանիպալ թագավորների գործունեյթյունը: Նվաճումներ և նվաճված մարզերի կառավարման կազմակերպումը (8—7-րդ դ. դ.):

10. Ասորեստանի եկոնոմիկան և սոցիալական կազմը 8—7-րդ դարերում: Խոշոր հոգատիրության աճումը: Գյուղացիության թուլացումը: Ստրոկների շահագործումը: Տաճարների և քաղաքների արտօնությունները: Վաշխառություն:

11. Ասորեստանի կուլտուրայի յուրահատուկ գծերը:

12. Ասորեստանի մրցությունը Նորբարելոնյան թագավորություն հետ: Ասորեստանի անկումը: Նինվեյի առումը քաղկեցիների և մարերի կողմից 607 թվին:

## XVI. ՔԱՂԴԵՅԱԿԱՆ ԲԱՐԵԼՈՆ

1. Քաղդեյացիների յերեալը Բարելոնում: Բարելոնի պատմության խառնակ շրջանը մ.թ. ա. 1-ին հազարամյակի սկզբում: Քաղդեյացիների և մարերի պայքարը Ասորեստանի գեմ: Ասորեստանի ժառանգության բաժանումը:

2. Նոր բարելոնյան թագավորության ծաղկումը Նարուգողո-

նոսորի ժամանակի Հուգայի յերկրի նվաճումը և հրեաների օրաբեկոնյան գերությունը:

3. Բարելոնյան հասարակությունը 6-րդ դ. մինչեւ մ.թ.: Հակասությունների աճումը խոշոր և մասն հողատերերի միջև: Առելարա- վաշխառուական տներ: Արհեստի վիճակը: Գների աճումը: Սարուկների շահագործման բնույթը:

4. Նարուգողոնոսորի շինարարական գործունեյթյունը Բարելոնում:

5. Քաղդեյական Բարելոնի կուլտուրան:

6. Բարելոնի թուլացումը Նարուգողի ժամանակ և նրա նվաճումը պարսիկների կողմից 538 թվին մ.թ. ա.:

## XVII. ԼԻԲԻԱԿԱՆ-ՍԱՅԻՍՅԱՆ ՅԵԳԻՌՏՈՆ

1. Յեղիպտոսն 1-ին հազարամյակում միջեւ մ.թ.: Լիբիական նվաճումը: Յեղիպտոսի բաժանումը մասն պետությունների:

2. Յեղիպտոսի սոցիալական կազմը՝ սասմիկներ, քրաքր, վաճառականներ և արհեստավորներ: Ազատներ և սարուկներ: Վաշխառություն և պայքար նրա գեմ: Բոկիորիս թագավորի որենքները:

3. Յեղիպտոսի նվաճումը յեթովպացիների և ասորեստանյիների ձեռքով:

4. Սայիսյան միավորման նախադրյալները: Առելարի զարգացումը: Հույների թափանցումը Յեղիպտոս: Պամետիք 1-ին և նրա քաղաքականությունը (7-րդ դ.):

5. Առելարի և արհեստի աճումը Նեփոյի ժամանակ: Նեխույնի եկապեղիցիան:

6. Յախմոս 2-րդ և պայքար իշխող դասակարգի միջնախավերի միջև: Յախմոսի արտաքին քաղաքականությունը:

7. Յեղիպտոսի նվաճումը պարուկաստանի կողմից 525 թվին մ.թ. ա.:

## XVIII. ԿՐՈՆԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ ՀԻՆ ԱՐԵՎԵԼՔԻ ՀԱՍՄԱԿԱՂԻԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵՋ

1. Կրոնական հավատալիքների ծագումը արխայիկ գարագանում՝ տուեմիզմ, նախնիքների պաշտամունք, անիմիզմ, մոռություն և դրանց մնացուկները հին Արելքի կրոններում:

2. Կրոնական վաղ պատկերացումների նշանակությունը առաջին եմպիրիկ գիտելիքների կուտակման համար: Քրմության գերը կրոնի զարգացման վաղ աստիճաններում:

3. Պաշտամունքի զարգացումը և քրմության ուժեղացումը: Հոգեհանգստյան (չայպոկոյնայ) պաշտամունքը և Աղիրիսի կրոնը: Հանդերձալ կյանքի հավատալիքների զարգացումը: Ազրաբային պաշտամունքները հին Միջազգետքում, Ասորիքում և Պատեստինում: Մեռնող և հարություն առնող աստծու առասպելները (Աղերիս, Թամմուզ, Աստիս, Աղոնիս և այլն): Աստղային պաշտամունքների զարգացումը և արևի աստվածացումը (Շամաշ, Ռտ, Իշտար, Սին, Նարու և այլն):

4. Կրոնի ոգտագործումը հոգուա պետության շահերի: Պատերազմների կրոնական սանկցիան: Պաշտամունքների կենարունացումը և թագավորի աստվածացումը (Մարգուկի, Ամոնի, Աշուրի, Յահվեյի և մյուսների պաշտամունքը): Յահվեյականությունը, վորպես աղդային մեկունացածության կրոն:

5. Կրոնական հավտատալիքների ավելի բարդ սիստեմների առաջանալը: Յեգիպտական և բարելոնյան պանթեոն: Կոսմոգոնիկ պատկերացումների զարգացումը: Միաստվածական տենտենցիների ծագումը Ատոնի պաշտամունքը հին Յեգիպտասոսում (14-րդ դ. մինչև մ. թ.) և Յահվեյինը Պաղեստինում (7-րդ դ. մինչև մ. թ.):

6. Կրոնը, վորպես աշխատավոր ձասսաների ձնշման գործիք: Պաշտամունքի ծիսական կողմի բարգացում: Աղիրիսի և Իղիդայի միստերիաները: Ծիսական յերգեր և պարեր: Քրմության դերը:

7. Հին զրույցների մշակումը քրմերի ձեռքով մասսաների գիտակցությունը մթագնելու նպատակով (Աստվածաշունչ): Կրոնական-դիդակտիկական (ուսուցողական) գրականության զարգացումը (Պտախոտեպի խրատը, բիբլիական խրատները): Կախարդությունների ոգտագործումը քրմության կողմից: Պատմական տրագիդիայի կեղծումը (հրեաների Յեգիպտասուից դուրս գալու լեզենքը, առանձին զրույցներ հին թագավորաստվածների մասին և այլն): Սկեպտիցիզմի յերեալը գրականության մեջ, վորպես բողոքի արտացոլում կրոնի և սոցիալական ձնշման գել:

(Հիասթափվածի զրույցն իր «Հոգու» հետ, «Տիրոջ և սորկի» յերկախոսությունը, Հորի լեզենը):

8. Հին հավատալիքների գիմացկունությունը գարերի ընթացքում: Հին կրոնների պատմության գիտական ուսումնամասիրության ակտուալությունը կրոնական սննդափաղտությունների դեմ պայքարելու նպատակով, վորոնց մնացուկները պահպանվել են մինչև մեր որերը:

## XIX. Ի Ր Ա Ն

1. Իրանի սարահարթի աշխարհագրական պայմանները:  
2. Հին Ելամի պատմությունն ու կուլտուրան:  
3. Հին Մարտաստանի և Պարսկաստանի պատմության աղբյուրները:

4. Մարտական պետության կազմվելն ու նրա պատմությունը:

5. Պարսկական ցեղերն ու նրանց միացումը: Պարսկական մեծ պետության առաջանալը: Կյուրոսի և Կամբըուզեսի մեծ նվաճումները (6-րդ դ.):

6. Խովությունները Պարսկաստանում կամքյուղեսի ժամանակ: Բելսիստունի արձանագրությունը և Դարեհի, վորպես ներքին պայքարն ավարտողի, դերը:

7. Դարեհ Վշտասպյանն ու նրա ոհքորմները: Պարսկական պետության եկոնոմիկան: Կազալավարձումների սիստեմն ու նրանց նշանակությունը: Առևտրավաշխառուական տները Բաբելոնում: Դարեհի գրամական սիստեմը: Կենտրոնական և տեղական վարչության կազմակերպումը: Բանակի կազմակերպումը: Դարեհի արտաքին քաղաքականությունը:

Հունա-պարսկական պատերազմները և Բաերքսեսի գործունեյությունը (5-րդ դ.):

8. Առանձին մարզերի պայքարն անկախության համար: Պարսկաստանի թուլացումը Դարեհի հաջորդների ժամանակ: Վարձկանություն: Ալեքսանդր Մակեդոնացու կողմից Պարսկաստանի նվաճման նախադրյալները:

9. Պարսկական կուլտուրա: Զենդ Ալեստան, վորպես պարսկական կրոնի ուսումնամասիրության կարևորագույն աղբյուր:

Միթրայի կրոնի մնացուկները: Զարատուստրան և կրոնական դուռը:

10. Հին Պարսկաստանի արվեստը:

## XX. ՀՆԴԱՍԱՆ

1. Յերկիրն ու բնակչությունը: Ինդոս և Գանգես գետերի հովիտները:

2. Հնդկաստանի պատմության աղբյուրները՝ հնագիտական տվյալներ, կրոնական յերկեր (Խիզ-Վեդա) և եպտա (Մահաբարտա և Ռամայանա), Մանուշի որենքները, արձանագրություններ, հունա-հռոմեյական հեղինակներ, չինական աղբյուրներ:

3. Հնդկաստանի վերաբերյալ պատմագրության զարգացումը 19—20-րդ դ. դ.:

4. Հնագույն Հնդկաստանի պատմության պերիոդիզացիան և նրա տրադիցիոն-պայմանական բնույթը:

5. Հնդկաստանի հնագույն կուլտուրան ըստ Փենջափի պեղումների (3-րդ հազարամյակ): Բնակավայրեր: Վուոգման սիստեմ: Արհեստներ: Հնդկաստանի «արիական» նվաճման հարցը:

6. Դաստկարգային հասարակության և տուածին պետությունների կազմվելը Հյուսիսային Հնդկաստանում: Տնտեսական և սոցիալական կազմը, գիրը, կրոնը ու կուլտուրան ըստ Ռիփ-Վեդայի և Եպոսի տվյալների:

7. Հին Հնդկաստանի տնտեսական և հասարակական կարգն 1-ին հազարամյակում մինչեւ մ. թ. (ըստ Մանուշի որենքների և այլ աղբյուրների): Սոցիալական շերտավորում. կաստայական սիստեմի զարգացումը: Ստրկություն և նրա ձեերը:

8. Մագագիտ և Կոսուլա պետությունների բարձրանալն ու մրցակցությունը 6—5-րդ դ. դ. մինչեւ մ. թ.: Նոր կենտրոն Պատալիպուտրում:

9. Բուդդայականության ծագումը:

10. Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքը (327 թ.) և հունական կուլտուրայի թափանցումը Հնդկաստան: Առեւրական քաղաքների և քաղաքային ազդաբնակչության միջին խավերի աճումը: Սոցիալական սրայքարի սրումը:

11. Մառուրիի գինաստիան: Զանդրագուպտան: Աշոկան և նրա

գործունեյությունը: Բուդդայականության ծաղկումը Աշոկի ժամանակ (3-րդ դ.):

12. Հին Հնդկաստանի կուլտուրան՝ կրոն, գրականություն, փիլիսոփայություն, գիտություն, արվեստ:

## XXI. ԶԻՆԱՍԱՆ

1. Հին Զինաստանի աշխարհագրական տեսությունը: Խուան-Խե և Կան-Ճզի գետերի հովիտները: Գետերի վարարումը և արհեստական վոռոգման նշանակությունը: Լյոսսահողը և նրա առանձնահատկությունները:

2. Բնակչություն: Զինացիների սկզբնական բնակեցման վայրերը:

3. Զինական պատմության հիմնական աղբյուրները՝ նյութական կուլտուրայի հուշարձաններ, արձանագրություններ և կլասիկ գրականության յերկեր: Զինական պատմության պերիոդիզացիան:

4. Արիայիկ Զինաստանն ըստ պեղումների տվյալների: Ինի գարաշը համարական՝ տահմական կարգը և նահապեատական ստրկություն: Դաստկարգային հասարակության ծագումը և պետությունների կազմվելը:

5. Զժոռույի գարաշը (1-ին հազարամյակի սկիզբը) Միացյալ պետության կազմվելը: Պայքար քոչվորների զեմ և կենտրոնացած պետության բաժան-բաժան լինելը: Առանձին իշխանների պայքարը իշխանության համար: Ցինի գինաստիայի բարձրացումը:

6. Ցին-Շի-Խուան-Դին և նրա գործունեյությունը (3-րդ դ. մինչեւ մ. թ.): Շինարարություն: Զինական մեծ պարիսպը և նրա նշանակությունը քոչվորների զեմ մզած պայքարի համար:

7. Գյուղացիական շարժումը և Ցինի գինաստիայի տապալումը: Խանի գարաշը (3-րդ դ. մինչեւ մ. թ.-2-րդ դ. մեր թ.): Սոցիալ-տնտեսական կազմ: Ստրկության զարգացումը: Վան-Մանի որենսողությունը: Ստրկության և գյուղացիության պատամբությունների նախապատրաստումը: «Կարմիր հոնքերի» և «գեղին փաթյուղների» ապատամբությունները: Խանի պետության մասնակումը:

8. Հին Չինաստանի կուլտուրան՝ լեզու և գիր, արվեստ, գիտություն, փիլիսոփայություն, սրոնական-քաղաքական սիստեմներ՝ հասցեն, կոնֆուցիոն և Մշնցցեն:

## XXII. ՅԵԶՐԱՓԱԿՈՒՄՆ

1. Բուրժուական և ֆաշիստական թեորիաները հին Արևագեթի սոցիալական հարաբերությունների մասին և նրանց քննադատությունը:

2. «Ասիական ֆորմացիայի» և «Փեռդալիդմի արևելյան փոփոխակի» թեորիաները և նրանց քննադատությունը Ցիկլայնության թեորիան և նրա քննադատությունը:

3. Մարքս-լենինյան ռևմունքը հին-արևելյան հասարակության մասին: Ստրկության ձևերն ու զարգացման աստիճանը և նրա տեղը սոցիալ-տնտեսական հարաբերությունների սիստեմում հին Արևելքում: Այդ հարցի լուսաբանությունը խորհրդային պատմագրության մեջ:

4. Դասակարգային հակասությունները և դասակարգային պայքարի ընույթը հին Արևելքում: Հին-արևելյան բռնապետությունը, վորպես արդյունք դասակարգային անհաշտ հակասությունների:

## ԴԱՍՆԹԱՑԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

### Ա. ՊԱՐՏԱԴՐԻՐ

1. Маркс и Энгельс об античности. под. ред. С. И. Ковалева, 1933 г.
2. Ֆ. Ենգելս.—Անտի Դյուրինգ:
3. Ֆ. Ենգելս:—Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը:
4. Ленин.—Лекция о государстве. Сбор. соч. 24-ый.
5. Сталин.—Марксизм и национально-колониальный вопрос (Կա հայերեն թարգմանությունը).
6. «История древнего мира» т. 1. Древний Восток, 1936 г. изд. Соцэкгиз—ГАИМК.
7. Тураев Б.—История Древнего Востока, т. 1-2, 1935 г.
8. Статьи в Б. С. Э. по истории Индии и Китая.

### Բ. ԼՐԱՑՈՒՑԻՉ

1. Древний мир. Обзор источников под редакцией Б. А. Тураева и Н. Н. Бородина, ч. 1. Восток.
2. Струве В.-Хрестоматия по древней истории, ч. 1. 1936 г.
3. Жаринов, Никольский, Радциг и Стерлингов.—Древний мир в памятниках его письменности, ч. 1, Восток, 1935 г.
4. Струве, В.—Очерки социально-экономической истории древнего Востока—Известия ГАИМК, № 97, 1935 г.
5. Д. Г. Брестед.—История Египта, т. 1-2 М. 1915 г.



4074

Թարգմ. Խմբ. Մ. ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

Տեխ. Խմբ. Մ. ՓԱՆՈՍՅԱՆ

Սրբագրիչ՝ Կ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Գլավլիտի լիազոր կ—8267 Պատվեր № 82 Տիրաժ 800

Հանձնված և արտադրության 8 դեկտեմբերի 1937 թ.

Ստորագրված և տպելու 15 դեկտեմբերի 1937 թ.

Ուսուցչների Վորակավորման Ինստիտուտի տպարան

ՀՀ Ազգային գրադարան



NL0402951

588

ԳԻՆԸ 60 գ.